

# Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագիր (ՎԿՆԾ) II

Վայրը՝

Տարածաշրջանային

Ծրագրի համարը՝

50118

Բիզնես ոլորտ՝

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ

Պետական/մասնավոր՝

Մասնավոր

Բնապահպանական կատեգորիա՝

FW

Խորհրդի նիստի նախատեսված ամսաթիվը՝

2018թ. մայիսի 23-ը

Կարգավիճակը՝

Հետազոտման փուլում է

Անգլերեն լեզվով ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը՝

2018թ. ապրիլի 24-ը

## Ծրագրի նկարագրություն

ՎԶԵԲ-ը իր՝ Վենչուրային կապիտալի ներդրումային ծրագիր II-ի միջոցով (ՎԿՆԾ II, որը ՎԶԵԲ-ի գոյություն ունեցող ՎԿՆԾ-ի շարունակությունն է, և իրենից ներկայացնում է 100 մլն եվրո արժողությամբ շրջանակային ծրագիր) նպատակ ունի ներդրումներ կատարել նորաստեղծ և աճի փուլում գտնվող տեխնոլոգիական ընկերություններում՝ սեփական կապիտալում ներդրումների և դրանց հետ կապված գործիքների միջոցով (ներդրումների չափը՝ մինչև 15 միլիոն եվրո), Բանկի գործունեության երկրներում՝ վենչուրային կապիտալի ոլորտի փորձառու ներդրողների հետ մեկտեղ: Ներդրումներն ուղղված են լինելու նորարարական և արագ աճող փոքր և միջին ձեռնարկություններին, որոնք հիմնականում բավականաչափ չեն սպասարկվում վենչուրային կապիտալի սահմանափակ

համայնքի կողմից: Ներդրումների նպատակն է. օգնել լրացնել շուկայում վենչուրային կապիտալի «բացը»:

## Ծրագրի նպատակները

i) ՎԿՆԾ-ն հնարավորություն է ընձեռում Բանկին խթանել տարածաշրջանում գիտելիքահեն տնտեսությունները, զարգացնել տեխնոլոգիական էկոհամակարգերը և աջակցել նորարարությանը. ii) ՎԿՆԾ-ի միջոցով Բանկը կարևոր դեր է կատարում տարածաշրջանում գոյություն ունեցող վենչուրային կապիտալի ֆինանսավորման բացը լրացնելու գործընթացում, iii) ՎԿՆԾ-ն թույլ է տալիս Բանկին պահպանել պորտֆելային մոտեցում ավելի բարձր ռիսկ ունեցող/ավելի բարձր եկամտաբերություն ունեցող ներդրումային հնարավորությունների նկատմամբ:

## Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ակնկալվում է, որ ՎԿՆԾ-ն կնպաստի մրցակցային և կայուն անցումային շրջանի որակների ամրապնդմանը, քանի որ այն կաջակցի նորարարական բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված վերջերս ստեղծված ընկերությունների զարգացմանը, ինչպես նաև կնպաստի ՎԶԵԲ-ի տարածաշրջանում դեռևս առաջացող վենչուրային կապիտալի հասանելիության բարելավմանը: ՎԿՆԾ I ծրագրի հաջողությունները հենք կհանդիսանան ՎԿՆԾ II ծրագրի համար, և ՎԿՆԾ II-ն առանցքային աջակցություն կտրամադրի ՎԶԵԲ-ի տարածաշրջանում գիտելիքահեն տնտեսության զարգացման նպատակով, ինչը համահունչ է ՎԶԵԲ-ի Գիտելիքահեն տնտեսության, և, մասնավորապես՝ Հոսք 3. տեխնոլոգիաների վրա հիմնված փոքր ընկերություններ, նախաձեռնությանը:

## Հաճախորդը

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ անհատական:

## ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

100,000,000.00 եվրո:

## Ծրագրի ընդհանուր գումարը

100,000,000.00 եվրո:

## Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Ծրագիրն ինքնին դասակարգված չէ Բանկի՝ 2014թ.-ի բնապահպանական և սոցիալական քաղաքականության ներքո, սակայն յուրաքանչյուր ենթաձևագիր

կղասակարգվի ըստ կոնկրետ դեպքերի և պետք է անցնի բնապահպանական և սոցիալական անհատական փորձաքննություն (*ESDD*) և *GET* քննություն՝ յուրաքանչյուր կոնկրետ ծրագրի և հաճախորդի դեպքում: Ենթածրագրի կատեգորիայի հիման վրա համապատասխան բնապահպանական և սոցիալական անհատական փորձաքննության միջոցով կհաստատվի, որ յուրաքանչյուր ենթածրագիր կառուցված է այնպես, որպեսզի համապատասխանի Բանկի՝ Կատարողականի նկատմամբ պահանջներին:

## Տեխնիկական աջակցություն

Առկա չէ:

## Ընկերության մասին տեղեկություններ

Դիմե՛ք Բախրոմ Իբրազիմովին  
02073386000

## Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների հետ կապված խնդրում ենք կապ հաստատել հաճախորդի ընկերության հետ:

Պետական հատվածի ծրագրերի համար այցելե՛ք [ՎՋԵԲ-ի Գնումները](#) կայքէջը:

Հեռ.՝ +44 20 7338 6794  
Էլ-փոստ՝ [procurement@ebrd.com](mailto:procurement@ebrd.com)

## Ընդհանուր տեղեկատվություն

Գնումներին չառնչվող տեղեկատվություն ՎՋԵԲ-ի ծրագրերի մասին՝

Հեռ.՝ +44 20 7338 7168  
Էլ-փոստ՝ [projectenquiries@ebrd.com](mailto:projectenquiries@ebrd.com)

## Հանրային տեղեկատվության քաղաքականություն /ՀՏՔ/

Հանրային տեղեկատվության քաղաքականությունը ի ցույց է դնում, թե ինչպես է ՎՋԵԲ-ը ներկայացնում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկումը: Այցելե՛ք ստորև բերված՝ Հանրային տեղեկատվության քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչպես ստանալ Հանրային ոլորտի խորհրդի հաշվետվությունը

ՀՏՔ-ի տեքստը

## Ծրագրերի Բողոքարկման Մեխանիզմ (ԾԲՄ)

Ծրագրերի Բողոքարկման Մեխանիզմը (ԾԲՄ) ՎՋԵԲ-ի հաշվետվողականության մեխանիզմն է: Այն հնարավորություն է ընձեռում անցկացնելու անկախ ուսումնասիրություն՝ ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր բնապահպանական և/կամ սոցիալական վնասակարության մասին՝ անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների վերաբերյալ:

Այցելե՛ք [Ծրագրերի Բողոքարկման Մեխանիզմի](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչպես պետք է ներկայացվի բողոքը: ԾԲՄ-ի պատասխանատու պաշտոնյան ([pcm@ebrd.com](mailto:pcm@ebrd.com)) կպատասխանի Ձեր բոլոր հարցերին բողոքի ներկայացման, ինչպես նաև գրանցման և իրավասության չափորոշիչների վերաբերյալ՝ [ԾԲՄ Ընթացակարգի Կանոններին](#) համաձայն: